

Հավելված N 4  
ՀՀ կառավարության 2013 թվականի  
մարտի 7-ի N 232 - Ն որոշման

**2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ԻՆ ՀԱԿԱՋԴՄԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ  
ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆ**

## I. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Մոնիտորինգի և գնահատման պլանի նպատակն է ուղղորդել և համակարգել տվյալների արդյունավետ հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ին ազգային հակազդման առաջընթացը գնահատելու և որոշումների կայացման գործընթացը բարելավելու համար:
2. Մոնիտորինգի և գնահատման պլանի խնդիրներն են՝
  - 1) Մոնիտորինգի և գնահատման համակարգի հզորացում տվյալների համակարգված հավաքագրման, մշակման, վերլուծության ու մեկնաբանման համար,
  - 2) Հիմնական ցուցանիշների ցանկի կազմում ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ին հակազդման առաջընթացը մոնիտորինգի ենթարկելու և որոշումների կայացման համար անհրաժեշտ տվյալները սահմանելու համար,
  - 3) Մոնիտորինգի և գնահատման համար անհրաժեշտ տվյալների հիմնական աղբյուրների նկարագրում,
  - 4) Տեղեկատվական հոսքերի հստակ համակարգի ձևավորում,
  - 5) Մոնիտորինգի և գնահատման գործընթացում յուրաքանչյուր օղակի դերի և պատասխանատվության սահմանում,
  - 6) Տրամադրվող հաշվետվությունների, զեկույցների ցանկի և տրամադրման մեխանիզմների սահմանում:
3. Մոնիտորինգի և գնահատման պլանի իրագործումից ակնկալվող արդյունքներն են՝
  - 1) Մոնիտորինգի և գնահատման հզորացված համակարգ,
  - 2) Ժամանակին և որակյալ հաշվետվողականություն,
  - 3) Ընթացիկ տեղեկատվության համակարգված հոսք,
  - 4) Հաշվետվական համակարգերը միավորող տվյալների մեկ ընդհանուր ազգային բազա,
  - 5) Տվյալների տրամադրման մշակված ռազմավարություն,
  - 6) Ներուժի ստեղծման և զարգացման պլան,
  - 7) Ուսումնասիրությունների և գնահատումների համաձայնեցված պլան:
4. Համաձայն մոնիտորինգի և գնահատման գլոբալ ռեֆերենս խմբի՝ մոնիտորինգի և գնահատման գործող համակարգը պետք է ունենա 12 ֆունկցիոնալ բաղադրիչ՝
  - 1) ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի մոնիտորինգի և գնահատման համակարգի կառուցվածքային միավորներ և դրանց գործառնություններ,
  - 2) ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի մոնիտորինգի և գնահատման մարդկային ներուժ,

- 3) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մոնիտորինգի և գնահատման համակարգի պլանավորման, համակարգման և կառավարման համագործակցություն,
  - 4) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մոնիտորինգի և գնահատման միջոլորտային ազգային պլան,
  - 5) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մոնիտորինգի և գնահատման տարեկան աշխատանքային պլան՝ գնահատված ծախսերով,
  - 6) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մոնիտորինգի և գնահատման համար ադվոկացիա և հաղորդակցում,
  - 7) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ծրագրի ընթացիկ մոնիտորինգ, համաճարակաբանական հսկում և հետազոտություններ,
  - 8) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տվյալների ազգային բազա, մեթոդական օգնություն և տեխնիկական աջակցություն, տվյալների աուդիտ,
  - 9) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ ուսումնասիրություններ և գնահատումներ, տվյալների տարածում և կիրառում:
5. Մոնիտորինգի և գնահատման ազգային համակարգը գործում է երեք մակարդակներում՝ ծառայությունների տրամադրման, մարզային և ազգային: Մոնիտորինգի և գնահատման համակարգն ստանում է հաշվետվություններ ծրագրի իրականացման գործում ներգրավված պետական և հասարակական կազմակերպություններից:
6. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մոնիտորինգի և գնահատման ազգային ընտրված ցուցանիշները հաշվարկելի են ողջամիտ գնով և համահունչ են՝
- 1) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրով սահմանված առաջնահերթ խնդիրներին,
  - 2) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ոլորտում պարտավորությունների հռչակագրով սահմանված հիմնական ցուցանիշներին,
  - 3) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ոլորտում միջամտություններին համընդհանուր հասանելիության հիմնական ցուցանիշներին,
  - 4) Ազգային հիմնական ռազմավարություններում և պլաններում առկա ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին առնչվող ցուցանիշներին,
  - 5) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մոնիտորինգի և գնահատման միջազգային ուղեցույցներին:
7. Ցուցանիշների աղյուսակում ներկայացված է ազգային ծրագրի մոնիտորինգի և գնահատման հիմնական ցուցանիշների ցանկը: Ցուցանիշները բաշխվում են ըստ տարիքի, սեռի և մարզերի: Ծրագրային մակարդակով տվյալներ տրամադրելու համար ցուցանիշները պետք է հաշվարկվեն ըստ ուղեցույցների:

8. Տվյալների հավաքագրման հինական աղբյուրներն են՝
  - 1) ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտություններ,
  - 2) Ծրագրերի մոնիտորինգ և գնահատում,
  - 3) Գործնական և գիտական հետազոտություններ,
  - 4) Ֆինանսական մոնիտորինգ,
  - 5) Այլ աղբյուրներ (օրինակ՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեպքերի արձանագրում, ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություններ):
  
9. Տվյալների ազգային բազան ռազմավարական պլանավորման գործընթացում անհրաժեշտ տվյալներ ապահովող ֆունկցիոնալ գործիք է, որը ներառում է պետական և հասարակական կազմակերպությունների կողմից հավաքագրված տվյալները: Տվյալների ազգային բազան ինտեգրում է արդեն իսկ գոյություն ունեցող հաշվետվական համակարգերից ստացված տվյալներ, ինչը հնարավորություն է տալիս խուսափելու կրկնարկումներից, ապահովելու տվյալների թափանցիկությունն ու հավաստիությունը, ինչպես նաև գաղտնիությունը: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տվյալների ազգային բազան կառավարում է ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն:
  
10. Մոնիտորինգի և գնահատման համար օգտագործված տվյալների որակի չափանիշներն են հավաստիությունը, ներկայացուցչականությունը, հուսալիությունը, ժամանակին ներկայացվելը, ճշգրտությունը, ամբողջականությունը, համեմատելիությունը: Մոնիտորինգի և գնահատման խումբը մշակում է տվյալների որակը երաշխավորող ուղեցույց, որը կհստակեցնի հիմնական ցուցանիշների որակի ապահովումը և կհամախմբի տվյալների կառավարման համակարգերը: Մոնիտորինգի և գնահատման խումբը նաև մեթոդական օգնություն և տեխնիկական աջակցություն է տրամադրում, որը ներառում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ծրագրերի և միջոցառումների մոնիտորինգ և գնահատում իրականացնողների աշխատանքների ուղղորդումը, ինչպես նաև գիտելիքների և փորձի փոխանակումը: Այն ուղղված է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ծառայություններ տրամադրող որոշակի թվով կազմակերպությունների մոնիտորինգի և գնահատման տեղային ներուժի հզորացմանը, որոնց ցանկը որոշակիացվում է յուրաքանչյուր տարվա սկզբին: Տվյալների հավաստիությունը պետք է հաստատվի ներքին և արտաքին մեխանիզմներով: Ներքին մեխանիզմը պետք է լինի որոշակի պարբերականությամբ իրականացվող կանոնավոր գործընթաց, իսկ արտաքինը՝ յուրաքանչյուր տարի պատահականորեն ընտրված վայրերում որոշակի ցուցանիշների հաշվարկման համար իրականացվող գործընթաց:
  
11. Ուսումնասիրություններն ու գնահատումները մոնիտորինգի և գնահատման համապարփակ համակարգի բաղադրիչներն են: Կրկնարկումներից խուսափելու, տվյալների տարածումը և որոշումներ կայացնելիս դրանց օգտագործումն ընդլայնելու

նպատակով անհրաժեշտ է ազգային մակարդակով իրականացնել ուսումնասիրությունների և գնահատումների հարցում առկա բացերը հայտնաբերելու, հետազոտությունները համակարգելու գործընթաց: Ուսումնասիրությունների, հետազոտությունների և գնահատման ճիշտ պլանավորումը համարժեք ֆինանսավորման նախապայմանն է:

12. Պետք է մշակվեն և տրամադրվեն հետևյալ հաշվետվություններն ու զեկույցները՝

- 1) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ տարեկան զեկույց (ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համաճարակի զարգացման միտումները, ազգային ցուցանիշները, ծառայությունների ծածկույթը, առաջնահերթությունները, բացերը, ներուժի զարգացման կարիքները),
- 2) Գործնական և գիտական հետազոտությունների վերաբերյալ զեկույցներ,
- 3) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ոլորտում պարտավորությունների հռչակագրի կատարման ընթացքի, համընդհանուր հասանելիության, Դուբլինի հռչակագրի կատարման ընթացքի վերաբերյալ 2 տարին մեկ ներկայացվող զեկույցներ,
- 4) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ոլորտի ծախսերի գնահատման զեկույց,
- 5) Այլ հաշվետվություններ և զեկույցներ:

13. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրի ցուցանիշների հաշվարկման կարգը նկարագրված է ստորև ներկայացված աղյուսակում:

Ռազմավարություն	Ցուցանիշ	Ցուցանիշի բաղադրիչներ	Ցուցանիշի հաշվարկման պարբերականություն/տվյալների հավաքագրման գործիք	Պատասխանատու կազմակերպություն	Թիրախ 2016թ.
<p><b>Ռազմավարություն 2.</b> ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման գործում մարդու իրավունքների և գենդերային հավասարության ապահովում</p>	<p>Հարցման ենթարկվածների տոկոսը, ովքեր հանդուրժողական վերաբերմունք ունեն ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ</p>	<p><b>Համարիչ.</b> Հարցման ենթարկվածների թիվը, ովքեր դրական են պատասխանել բոլոր չորս հարցերին. Եթե Ձեր բարեկամը վարակվի ՄԻԱՎ-ով, կցանկանայի՞ք արդյոք նրան խնամել Ձեր տանը: Դուք կգնե՞ք վաճառողից թարմ բանջարեղեն, եթե իմանաք, որ նա վարակված է ՄԻԱՎ-ով: Ձեր կարծիքով, եթե ուսուցիչը վարակված է ՄԻԱՎ-ով, բայց առույգ է, թույլատրելի՞ է արդյոք, որ նա շարունակի դասավանդել: Եթե Ձեր ընտանիքի անդամներից մեկը վարակվի ՄԻԱՎ-ով, կցանկանայի՞ք այդ փաստը գաղտնի պահել, թե՞ ոչ: <b>Հայտարար.</b> Հարցման ենթարկվածների թիվը, ովքեր երբևէ լսել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին: <b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (մինչև 25 տարեկան և 25-ից բարձր):</p>	<p>Հինգ տարին մեկ անգամ/ Ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն</p>	<p>Ազգային վիճակագրական ծառայություն (համաձայնությամբ) Առողջապահության նախարարություն</p>	<p>Կանայք - 5% Տղամարդիկ – 10%</p>

<b>Ռազմավարություն 1.</b> Թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով ՄԻԱՎ-ի փոխանցման նվազեցում	<b>ՄԻԱՎ-ի տարածվածությունը ԹՆՕ-ների շրջանում</b>	<b>Համարիչ.</b> ՄԻԱՎ վարակ ունեցող ԹՆՕ-ների թիվը: <b>Հայտարար.</b> ՄԻԱՎ-ի վարակի վերաբերյալ հետազոտված ԹՆՕ-ների թիվը: <b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (մինչև 25 տարեկան և 25-ից բարձր):	Երկու տարին մեկ անգամ/ Կենսաբանական հետազոտություն ԹՆՕ-ների շրջանում	ՁԻԱՀ-ի ԿՀԿ	Ազգային - 5% Երևան - 8%
	Վերջին ներարկման ընթացքում ներարկման մանրէազերծ (ստերիլ) պարագաներ օգտագործած ԹՆՕ-ների տոկոսը	<b>Համարիչ.</b> Թմրամիջոցի վերջին ներարկային օգտագործման ժամանակ մանրէազերծ պարագաների օգտագործման մասին նշած ԹՆՕ-ների թիվը: <b>Հայտարար.</b> Վերջին մեկ ամսվա ընթացքում ներարկային ճանապարհով թմրամիջոցների օգտագործման մասին նշած ԹՆՕ-ներ: <b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (մինչև 25 տարեկան և 25-ից բարձր):	Երկու տարին մեկ անգամ/ Վարքագծային հետազոտություն ԹՆՕ-ների շրջանում	ՁԻԱՀ-ի ԿՀԿ	90%
	Սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած ԹՆՕ-ների տոկոսը	<b>Համարիչ.</b> Հարցման ենթարկված ԹՆՕ-ների թիվը, ովքեր օգտագործել են պահպանակ սեռական վերջին հարաբերության ժամանակ: <b>Հայտարար.</b> Հարցման ենթարկված ԹՆՕ-ների թիվը, ովքեր ունեցել են սեռական հարաբերություն վերջին 30 օրվա ընթացքում:	Երկու տարին մեկ անգամ/ Վարքագծային հետազոտություն ԹՆՕ-ների շրջանում	ՁԻԱՀ-ի ԿՀԿ	60%

		<p><b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (15-19, 20-24 և 25-49 տարեկան):</p>			
	<p>ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիք ունեցող ԹՆՕ-ների տոկոսը</p>	<p><b>Համարիչ.</b> Հարցման ենթարկված ԹՆՕ-ների թիվը, ովքեր ճիշտ են պատասխանել բոլոր հինգ հարցերին. Հնարավոր է նվազեցնել ՄԻԱՎ-ով վարակման վտանգը՝ միայն մեկ, հավատարիմ, ՄԻԱՎ-ով չվարակված զուգընկերոջ հետ սեռական հարաբերություններ ունենալով: Հնարավոր է ՄԻԱՎ-ով վարակման վտանգը նվազեցնել՝ պահպանակ օգտագործելով: Կարող է արդյոք առողջ տեսք ունեցող մարդը լինել ՄԻԱՎ-ով վարակված: Հնարավոր է վարակվել ՄԻԱՎ-ով ՄԻԱՎ վարակ ունեցող մարդուն ձեռքով բարևելիս: Հնարավոր է վարակվել ՄԻԱՎ-ով ՄԻԱՎ վարակ ունեցող մարդու հետ համատեղ սնունդ ընդունելիս:</p> <p><b>Հայտարար.</b> Հարցման ենթարկված ԹՆՕ-ների թիվը, ովքեր պատասխանել են բոլոր հինգ հարցերին (ներառյալ «չգիտեմ» պատասխանը):</p> <p><b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի:</p>	<p>Երկու տարին մեկ անգամ/ Վարքագծային հետազոտություն ԹՆՕ-ների շրջանում</p>	<p>ՁԻԱՀ-ի ԿՀԿ</p>	<p>60%</p>



	<p>ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկված ԹՆՕ-ների տոկոսը</p>	<p><b>Համարիչ.</b> Հարցման ենթարկված ԹՆՕ-ների թիվը, ովքեր դրական են պատասխանել նշված 3 հարցերին. Գիտե՞ք արդյոք, թե ցանկության դեպքում որտեղ կարող եք հետազոտվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ:          Վերջին 12 ամիսների ընթացքում Ձեզ տրամադրվե՞լ են պահպանակներ (օրինակ՝ աուֆրիչ ծառայություններում):          Վերջին 12 ամիսների ընթացքում Ձեզ տրամադրվե՞լ են մանրէազերծ ներարկիչներ և ասեղներ (օրինակ՝ աուֆրիչ աշխատողների, «հավասարը հավասարին» մեթոդով ուսուցանողների կողմից կամ ներարկիչների փոխանակման ծրագրերի միջոցով):  <b>Հայտարար.</b> Հարցման ենթարկված ԹՆՕ-ների ընդհանուր թիվը:  <b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (մինչև 25 տարեկան և 25-ից բարձր):          Ցուցանիշի գումարային արժեքը հաշվարկելու նպատակով հարկավոր է ստանալ ցուցանիշի արժեքը նաև յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առանձին (միևնույն հայտարարի հիման վրա):</p>	<p>Երկու տարին մեկ անգամ/          Վարքագծային հետազոտություն ԹՆՕ-ների շրջանում</p>	<p>ՁԻԱՀ-ի ԿՀԿ</p>	<p>35%</p>
--	--	--	---	-------------------	------------

	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն անցած ԹՆՕ-ների տոկոսը	<p><b>Համարիչ.</b> ԹՆՕ-ների թիվը, ովքեր վերջին 12 ամիսների ընթացքում հետազոտվել են ՄԻԱՎ-ի վերաբերյալ և գիտեն հետազոտության արդյունքների մասին:</p> <p><b>Հայտարար.</b> Հարցման ենթարկված ԹՆՕ-ների ընդհանուր թիվը:</p> <p><b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (մինչև 25 տարեկան և 25-ից բարձր):</p>	Երկու տարին մեկ անգամ/ Վարքագծային հետազոտություն ԹՆՕ-ների շրջանում	ՁԻԱՀ-ի ԿՀԿ	36%
<p><b>Ռազմավարություն 2.</b> Կոմերցիոն սեռական ծառայությունների տրամադրման միջոցով ՄԻԱՎ-ի փոխանցման նվազեցում</p>	<p><b>ՄԻԱՎ-ի տարածվածությունը ԿՍԿ-ների շրջանում</b></p>	<p><b>Համարիչ.</b> ՄԻԱՎ վարակ ունեցող ԿՍԿ-ների թիվը:</p> <p><b>Հայտարար.</b> ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված ԿՍԿ-ների թիվը:</p> <p><b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (մինչև 25 տարեկան և 25-ից բարձր):</p>	Երկու տարին մեկ անգամ/ Կենսաբանական հետազոտություն ԿՍԿ-ների շրջանում	ՁԻԱՀ-ի ԿՀԿ	Ազգային - <2% Երևան - <2%
	<p>Հաճախորդի հետ սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած ԿՍԿ-ների տոկոսը</p>	<p><b>Համարիչ.</b> Հաճախորդի հետ սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակի օգտագործման մասին նշած ԿՍԿ-ներ:</p> <p><b>Հայտարար.</b> Վերջին 12 ամիսների ընթացքում վարձատրության դիմաց սեռական ծառայություններ տրամադրած ԿՍԿ-ներ:</p> <p><b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (մինչև 25 տարեկան և 25-ից բարձր):</p>	Երկու տարին մեկ անգամ/ Վարքագծային հետազոտություն ԿՍԿ-ների շրջանում	ՁԻԱՀ-ի ԿՀԿ	95%

	<p>ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիք ունեցող ԿՍԿ-ների տոկոսը</p>	<p><b>Համարիչ.</b> Հարցման ենթարկված ԿՍԿ-ների թիվը, ովքեր ճիշտ են պատասխանել բոլոր հինգ հարցերին. Հնարավոր է նվազեցնել ՄԻԱՎ-ով վարակման վտանգը՝ միայն մեկ, հավատարիմ, ՄԻԱՎ-ով չվարակված զուգընկերոջ հետ սեռական հարաբերություններ ունենալով:  Հնարավոր է ՄԻԱՎ-ով վարակման վտանգը նվազեցնել պահպանակ օգտագործելով:  Կարող է արդյոք առողջ տեսք ունեցող մարդը լինել ՄԻԱՎ-ով վարակված:  Հնարավոր է վարակվել ՄԻԱՎ-ով ՄԻԱՎ վարակ ունեցող մարդուն ձեռքով բարևելիս:  Հնարավոր է վարակվել ՄԻԱՎ-ով ՄԻԱՎ վարակ ունեցող մարդու հետ համատեղ սնունդ ընդունելիս:  <b>Հայտարար.</b> Հարցման ենթարկված ԿՍԿ-ների թիվը, ովքեր պատասխանել են բոլոր հինգ հարցերին (ներառյալ «չգիտեմ» պատասխանը):  <b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (մինչև 25 տարեկան և 25-ից բարձր):  Բացի ցուցանիշի գումարային արժեքից՝ հարկավոր է ստանալ</p>	<p>Երկու տարին մեկ անգամ/  Վարքագծային հետազոտություն ԿՍԿ-ների շրջանում</p>	<p>ՁԻԱՀ-ի ԿՀԿ</p>	<p>64%</p>
--	--	---	---	-------------------	------------

		ցուցանիշի արժեքը նաև յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առանձին (միևնույն հայտարարի հիման վրա):			
ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկված ԿՍԿ-ների տոկոսը	<p><b>Համարիչ.</b> Նշված երկու հարցերին դրական պատասխանած ԿՍԿ-ներ. Գիտե՞ք արդյոք, թե ցանկության դեպքում որտեղ կարող եք հետազոտվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ:</p> <p>Վերջին 12 ամիսների ընթացքում Ձեզ տրամադրվե՞լ են պահպանակներ (օրինակ՝ աուֆրիչ ծառայություններում, հասարակական կազմակերպություններում, կամ սեռական առողջության կլինիկաներում):</p> <p><b>Հայտարար.</b> Հարցման ենթարկված ԿՍԿ-ների ընդհանուր թիվը:</p> <p><b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (մինչև 25 տարեկան և 25-ից բարձր):</p> <p>Ցուցանիշի գումարային արժեքը հաշվարկելու նպատակով հարկավոր է ստանալ ցուցանիշի արժեքը նաև յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առանձին (միևնույն հայտարարի հիման վրա):</p>	Երկու տարին մեկ անգամ/ Վարքագծային հետազոտություն ԿՍԿ-ների շրջանում	ՁԻԱՀ-ի ԿՀԿ	60%	
ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն	<p><b>Համարիչ.</b> ԿՍԿ-ներ, ովքեր վերջին 12 ամիսների ընթացքում հետազոտվել են ՄԻԱՎ-ի վերաբերյալ և գիտեն</p>	Երկու տարին մեկ անգամ/ Վարքագծային	ՁԻԱՀ-ի ԿՀԿ	36%	

	անցած ԿՍԿ-ների տոկոսը	հետազոտության արդյունքների մասին: <b>Հայտարար.</b> Հարցման ենթարկված ԿՍԿ-ների ընդհանուր թիվը: <b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (մինչև 25 տարեկան և 25-ից բարձր):	հետազոտություն ԿՍԿ-ների շրջանում		
<b>Ռազմավարություն 3.</b> Տղամարդկանց միջև հոմոսեքսուալ հարաբերությունների միջոցով ՄԻԱՎ-ի փոխանցման նվազեցում	<b>ՄԻԱՎ-ի տարածվածությունը SUS-ների շրջանում</b>	<b>Համարիչ.</b> ՄԻԱՎ վարակ ունեցող SUS-ների թիվը: <b>Հայտարար.</b> ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված SUS-ների թիվը: <b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (մինչև 25 տարեկան և 25-ից բարձր):	Երկու տարին մեկ անգամ/ Կենսաբանական հետազոտություն SUS-ների շրջանում	ՁԻԱՀ-ի ԿՀԿ	Ազգային - <2% Երևան - <2%
	Անալ սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած SUS-ների տոկոսը	<b>Համարիչ.</b> Տղամարդ զուգընկերոջ հետ անալ սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած տղամարդկանց թիվը: <b>Հայտարար.</b> Տղամարդ զուգընկերոջ հետ վերջին 6 ամիսների ընթացքում անալ սեռական հարաբերություն ունեցած SUS-ների թիվը: <b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (մինչև 25 տարեկան և 25-ից բարձր):	Երկու տարին մեկ անգամ/ Վարքագծային հետազոտություն SUS-ների շրջանում	ՁԻԱՀ-ի ԿՀԿ	75%
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիք ունեցող SUS-ների տոկոսը	<b>Համարիչ.</b> Հարցման ենթարկված SUS-ների թիվը, ովքեր ճիշտ են պատասխանել բոլոր հինգ հարցերին. Հնարավոր է նվազեցնել ՄԻԱՎ-ով	Երկու տարին մեկ անգամ/ Վարքագծային հետազոտություն	ՁԻԱՀ-ի ԿՀԿ	60%

		<p>վարակման վտանգը՝ միայն մեկ, հավատարիմ, ՄԻԱՎ-ով չվարակված զուգընկերոջ հետ սեռական հարաբերություններ ունենալով:</p> <p>Հնարավոր է ՄԻԱՎ-ով վարակման վտանգը նվազեցնել՝ պահպանակ օգտագործելով:</p> <p>Կարող է արդյոք առողջ տեսք ունեցող մարդը լինել ՄԻԱՎ-ով վարակված:</p> <p>Հնարավոր է վարակվել ՄԻԱՎ-ով ՄԻԱՎ վարակ ունեցող մարդուն ձեռքով բարևելիս:</p> <p>Հնարավոր է վարակվել ՄԻԱՎ-ով ՄԻԱՎ վարակ ունեցող մարդու հետ համատեղ սնունդ ընդունելիս:</p> <p><b>Հայտարար.</b> Հարցման ենթարկված SUS-ների թիվը, ովքեր պատասխանել են բոլոր հինգ հարցերին (ներառյալ «չգիտեմ» պատասխանը):</p> <p><b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (մինչև 25 տարեկան և 25-ից բարձր):</p> <p>Բացի ցուցանիշի գումարային արժեքից՝ հարկավոր է ստանալ ցուցանիշի արժեքը նաև յուրաքանչյուր հարցի վերաբերյալ (միևնույն հայտարարի հիման վրա):</p>	SUS-ների շրջանում		
--	--	--	-------------------	--	--

	<p>ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկված SUS-ների տոկոսը</p>	<p><b>Համարիչ.</b> Հարցման ենթարկված SUS-ների թիվը, ովքեր դրական են պատասխանել նշված 2 հարցերին. Գիտե՞ք արդյոք, թե ցանկության դեպքում որտեղ կարող եք հետազոտվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ: Վերջին 12 ամիսների ընթացքում Ձեզ տրամադրվե՞լ են պահպանակներ (օրինակ՝ աուֆրիչ ծառայություններում):</p> <p><b>Հայտարար.</b> Հարցման ենթարկված SUS-ների ընդհանուր թիվը:</p> <p><b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (մինչև 25 տարեկան և 25-ից բարձր): Ցուցանիշի գումարային արժեքը հաշվարկելու նպատակով հարկավոր է ստանալ ցուցանիշի արժեքը նաև յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առանձին (միևնույն հայտարարի հիման վրա):</p>	<p>Երկու տարին մեկ անգամ/ Վարքագծային հետազոտություն SUS-ների շրջանում</p>	<p>ՁԻԱՀ-ի ԿԿԿ</p>	<p>70%</p>
	<p>ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն անցած SUS-ների տոկոսը</p>	<p><b>Համարիչ.</b> SUS-ների թիվը, ովքեր վերջին 12 ամիսների ընթացքում հետազոտվել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ և գիտեն հետազոտության արդյունքների մասին:</p> <p><b>Հայտարար.</b> Հարցման ենթարկված SUS-ների ընդհանուր թիվը:</p> <p><b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է</p>	<p>Երկու տարին մեկ անգամ/ Վարքագծային հետազոտություն SUS-ների շրջանում</p>	<p>ՁԻԱՀ-ի ԿԿԿ</p>	<p>60%</p>

		ըստ սեռի և տարիքի (մինչև 25 տարեկան և 25-ից բարձր):			
<b>Ռազմավարություն 4.</b> Միգրանտների շրջանում ՄԻԱՎ-ի փոխանցման նվազեցում	<b>Արձանագրված ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի մեջ միգրանտների տոկոսը</b>	<b>Համարիչ.</b> Արձանագրված ՄԻԱՎ վարակով հիվանդների թիվը՝ հավանաբար վարակված արտերկրում: <b>Հայտարար.</b> Վերջին 12 ամիսների ընթացքում արձանագրված ՄԻԱՎ վարակի ընդհանուր դեպքերի թիվը: <b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի, տարիքի (15-19, 20-24 և 25-49 տարեկան), փոխանցման ուղու և հավանական վարակման երկրի:	Տարին մեկ անգամ/ ՄԻԱՎ վարակի հետազոտությունների գրանցամատյան	ՁԻԱՀ-ի ԿՀԿ	60%
	Սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած միգրանտների տոկոսը	<b>Համարիչ.</b> Հարցման ենթարկված միգրանտների (15-49 տարեկան) թիվը, ովքեր ունեցել են մեկից ավելի զուգընկեր վերջին 12 ամիսների ընթացքում և օգտագործել են պահպանակ վերջին սեռական հարաբերության ժամանակ: <b>Հայտարար.</b> Հարցման ենթարկված միգրանտների (15-49 տարեկան) թիվը, ովքեր ունեցել են մեկից ավելի զուգընկեր վերջին 12 ամիսների ընթացքում: <b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (15-19, 20-24 և 25-49 տարեկան):	Երկու տարին մեկ անգամ/ Վարքագծային հետազոտություն միգրանտների շրջանում	ՁԻԱՀ-ի ԿՀԿ	40%



	<p>ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքներ ունեցող միգրանտների տոկոսը</p>	<p><b>Համարիչ.</b> Հարցման ենթարկված միգրանտների թիվը, ովքեր ճիշտ են պատասխանել բոլոր հինգ հարցերին. Հնարավոր է նվազեցնել ՄԻԱՎ-ով վարակման վտանգը՝ միայն մեկ, հավատարիմ, ՄԻԱՎ-ով չվարակված զուգընկերոջ հետ սեռական հարաբերություններ ունենալով:  Հնարավոր է ՄԻԱՎ-ով վարակման վտանգը նվազեցնել՝ պահպանակ օգտագործելով:  Կարող է արդյոք առողջ տեսք ունեցող մարդը լինել ՄԻԱՎ-ով վարակված:  Հնարավոր է վարակվել ՄԻԱՎ-ով ՄԻԱՎ վարակ ունեցող մարդուն ձեռքով բարևելիս:  Հնարավոր է վարակվել ՄԻԱՎ-ով ՄԻԱՎ վարակ ունեցող մարդու հետ համատեղ սնունդ ընդունելիս:  <b>Հայտարար.</b> Հարցման ենթարկված միգրանտների թիվը, ովքեր պատասխանել են բոլոր հինգ հարցերին (ներառյալ «չգիտեմ» պատասխանը):  <b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (մինչև 25 տարեկան և 25-ից բարձր):  Բացի ցուցանիշի գումարային արժեքից՝ հարկավոր է ստանալ ցուցանիշի</p>	<p>Երկու տարին մեկ անգամ/  Վարքագծային հետազոտություն միգրանտների շրջանում</p>	<p>ՁԻԱՀ-ի ԿՀԿ</p>	<p>40%</p>
--	--	--	--	-------------------	------------

		արժեքը նաև յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առանձին (միևնույն հայտարարի հիման վրա):			
	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն անցած միգրանտների տոկոսը	<b>Համարիչ.</b> Միգրանտների թիվը, ովքեր վերջին 12 ամիսների ընթացքում հետազոտվել են ՄԻԱՎ վարակի վերաբերյալ և գիտեն հետազոտության արդյունքների մասին: <b>Հայտարար.</b> Հարցման ենթարկված միգրանտների ընդհանուր թիվը: <b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (մինչև 25 տարեկան և 25-ից բարձր):	Երկու տարին մեկ անգամ/ Վարքագծային հետազոտություն միգրանտների շրջանում	ՁԻԱՀ-ի ԿՀԿ	40%
<b>Ռազմավարություն 5.</b> ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցելի բնակչության այլ խմբերի շրջանում (այդ թվում՝ ՔԿՀ-ներում գտնվողներ, փախստականներ և առավել խոցելի դեռահասներ ու երիտասարդներ) ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում	ՄԻԱՎ-ի տարածվածությունը ՔԿՀ-ներում գտնվողների շրջանում	<b>Համարիչ.</b> ՔԿՀ-ներում գտնվողների թիվը, ովքեր ունեն ՄԻԱՎ վարակ: <b>Հայտարար.</b> ՔԿՀ-ներում գտնվողների թիվը, ովքեր հետազոտվել են ՄԻԱՎ-ի վերաբերյալ: <b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (մինչև 25 տարեկան և 25-ից բարձր):	Տարին մեկ անգամ/ հաշվետվական ձև հ. 88	ՁԻԱՀ-ի ԿՀԿ	<2%
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքներ ունեցող ՔԿՀ-ներում	<b>Համարիչ.</b> ՔԿՀ-ներում գտնվող հարցման ենթարկվածների թիվը, ովքեր ճիշտ են պատասխանել բոլոր հինգ հարցերին. Հնարավոր է նվազեցնել ՄԻԱՎ-ով	Երկու տարին մեկ անգամ/ Վարքագծային հետազոտություն ՔԿՀ-ներում	ՁԻԱՀ-ի ԿՀԿ	60%

	<p>գտնվողների տոկոսը</p>	<p>վարակման վտանգը՝ միայն մեկ, հավատարիմ, ՄԻԱՎ-ով չվարակված զուգընկերոջ հետ սեռական հարաբերություններ ունենալով:          Հնարավոր է ՄԻԱՎ-ով վարակման վտանգը նվազեցնել՝ պահպանակ օգտագործելով:          Կարող է արդյոք առողջ տեսք ունեցող մարդը լինել ՄԻԱՎ-ով վարակված:          Հնարավոր է վարակվել ՄԻԱՎ-ով ՄԻԱՎ վարակ ունեցող մարդուն ձեռքով բարևելիս:          Հնարավոր է վարակվել ՄԻԱՎ-ով ՄԻԱՎ վարակ ունեցող մարդու հետ համատեղ սնունդ ընդունելիս:  <b>Հայտարար.</b> ՔԿՀ-ներում գտնվող հարցման ենթարկվածների թիվը, ովքեր պատասխանել են բոլոր հինգ հարցերին (ներառյալ «չգիտեմ» պատասխանը):  <b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (մինչև 25 տարեկան և 25-ից բարձր):          Բացի ցուցանիշի գումարային արժեքից՝ հարկավոր է ստանալ</p>	<p>գտնվողների շրջանում</p>		
--	--------------------------	---	----------------------------	--	--

		ցուցանիշի արժեքը նաև յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առանձին (միևնույն հայտարարի հիման վրա):			
ՔԿՀ-ներում գտնվողների տոկոսը, ովքեր սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ են օգտագործել	<b>Համարիչ.</b> ՔԿՀ-ներում գտնվողների (15-49 տարեկան) թիվը, ովքեր պահպանակ են օգտագործել սեռական վերջին հարաբերության ժամանակ: <b>Հայտարար.</b> Հարցման ենթարկված ՔԿՀ-ներում գտնվողների թիվը (15-49 տարեկան), ովքեր ունեցել են մեկից ավելի զուգընկեր վերջին 12 ամիսների ընթացքում: <b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (15-19, 20-24 և 25-49 տարեկան):	Երկու տարին մեկ անգամ/ Վարքագծային հետազոտություն ՔԿՀ-ներում գտնվողների շրջանում	ՁԻԱՀ-ի ԿՀԿ	50%	
ՔԿՀ-ներում գտնվողների տոկոսը, ովքեր ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն են անցել	<b>Համարիչ.</b> ՔԿՀ-ներում գտնվողների թիվը, ովքեր վերջին 12 ամիսների ընթացքում հետազոտվել են ՄԻԱՎ-ի վերաբերյալ և գիտեն հետազոտության արդյունքների մասին: <b>Հայտարար.</b> ՔԿՀ-ներում գտնվող հարցման ենթարկվածների ընդհանուր թիվը:	Երկու տարին մեկ անգամ/ Վարքագծային հետազոտություն ՔԿՀ-ներում գտնվողների շրջանում	ՁԻԱՀ-ի ԿՀԿ	60%	

		<b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (մինչև 25 տարեկան և 25-ից բարձր):			
	Սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած երիտասարդների (15-24 տարեկան) տոկոսը	<p><b>Համարիչ.</b> 15-24 տարեկան երիտասարդ կանանց և տղամարդկանց թիվը, ովքեր պահպանակ են օգտագործել զուգընկերոջ հետ սեռական վերջին հարաբերության ժամանակ:</p> <p><b>Հայրարար.</b> Հարցման ենթարկված 15-24 տարեկան երիտասարդ կանանց և տղամարդկանց թիվը, ովքեր ունեցել են սեռական հարաբերություն վերջին 30 օրվա ընթացքում:</p> <p><b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (15-19 և 20-24 տարեկան):</p>	Երկու տարին մեկ անգամ/ Վարքագծային հետազոտություն երիտասարդների շրջանում	ՁԻԱՀ-ի ԿՀԿ	85%
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիք ունեցող երիտասարդների (15-24 տարեկան) տոկոսը	<p><b>Համարիչ.</b> Հարցման ենթարկված 15-24 տարեկան երիտասարդների թիվը, ովքեր ճիշտ են պատասխանել բոլոր հինգ հարցերին.</p> <p>Հնարավոր է նվազեցնել ՄԻԱՎ-ով վարակման վտանգը՝ միայն մեկ, հավատարիմ, ՄԻԱՎ-ով չվարակված զուգընկերոջ հետ սեռական հարաբերություններ ունենալով:</p>	Երկու տարին մեկ անգամ/ Վարքագծային հետազոտություն երիտասարդների շրջանում	ՁԻԱՀ-ի ԿՀԿ	50%

		<p>Հնարավոր է ՄԻԱՎ-ով վարակման վտանգը նվազեցնել՝ պահպանակ օգտագործելով:</p> <p>Կարող է արդյոք առողջ տեսք ունեցող մարդը լինել ՄԻԱՎ-ով վարակված:</p> <p>Հնարավոր է վարակվել ՄԻԱՎ-ով ՄԻԱՎ վարակ ունեցող մարդուն ձեռքով բարևելիս:</p> <p>Հնարավոր է վարակվել ՄԻԱՎ-ով ՄԻԱՎ վարակ ունեցող մարդու հետ համատեղ սնունդ ընդունելիս:</p> <p><b>Հայտարար.</b> Հարցման ենթարկված 15-24 տարեկան երիտասարդների ընդհանուր թիվը:</p> <p><b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (15-19 և 20-24 տարեկան):</p>			
	<p>ՄԻԱՎ-ի տարածվածությունը 15-24 տարեկան երիտասարդների շրջանում</p>	<p><b>Համարիչ.</b> ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված հղիների թիվը, ում մոտ հայտնաբերվել է ՄԻԱՎ վարակ:</p> <p><b>Հայտարար.</b> ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված հղիների թիվը:</p> <p><b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ տարիքի (15-19 և 20-24 տարեկան):</p>	<p>Տարին մեկ անգամ/ հաշվետվական ձև հ. 88</p>	<p>ՁԻԱՀ-ի ԿՀԿ</p>	<p>&lt;0.1%</p>

<p><b>Ռազմավարություն 7.</b> Հետերոսեքսուալ ճանապարհով ՄԻԱՎ- ի փոխանցման նվազեցում</p>	<p>ՄԻԱՎ վարակով հիվանդների հետազոտված մշտական զուգընկերների տոկոսը</p>	<p><b>Համարիչ.</b> ՄԻԱՎ վարակ ունեցող անձանց մշտական զուգընկերների թիվը, ովքեր հետազոտվել են ՄԻԱՎ- ի վերաբերյալ: <b>Հայտարար.</b> Մշտական զուգընկերներ ունենալու մասին նշած ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց թիվը: <b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (մինչև 25 տարեկան և 25-ից բարձր):</p>	<p>Տարին մեկ ան- գամ/ ՄԻԱՎ վարակի վերաբեր- յալ հետազոտու- թյունների գրան- ցամատյաններ</p>	<p>ՁԻԱՀ-ի ԿՀԿ</p>	<p>75%</p>
	<p>ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցած հղի կանանց տոկոսը</p>	<p><b>Համարիչ.</b> ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցած հղիների թիվը: <b>Հայտարար.</b> Հաշվետու տարում հղիների թիվը: <b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ տարիքի (15-19 և 20-24 տարեկան):</p>	<p>Տարին մեկ ան- գամ/հաշվետվակ ան ձև հ. 88/ հանրապետական առողջապահա- կան տեղեկատվա- կան վերլուծական կենտրոն</p>	<p>ՁԻԱՀ-ի ԿՀԿ</p>	<p>95%</p>
	<p>ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված դոնորական արյան նմուշների տոկոսը</p>	<p><b>Համարիչ.</b> ՄԻԱՎ-ի վերաբերյալ որակի ապահովմամբ հետազոտված դոնորական արյան միավորների քանակը: <b>Հայտարար.</b> ՀՀ-ում դոնորական արյան միավորների ընդհանուր քանակը:</p>	<p>Տարին մեկ անգամ/հաշվետվ ական ձև հ. 88/ հանրապետական առողջապահա- կան տեղեկատվա- կան վերլուծական կենտրոն</p>	<p>ՁԻԱՀ-ի ԿՀԿ</p>	<p>100%</p>

	Դիսպանսերային հսկողության տակ գտնվողների տոկոսը	<p><b>Համարիչ.</b> Հաշվետու տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ ՁԻԱՀ-ի ԿՀԿ այցելած ՄԻԱՎ-ով ապրող մեծահասակների և երեխաների թիվը:</p> <p><b>Հայտարար.</b> ՄԻԱՎ վարակ ախտորոշում ստացած և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի գրանցամատյաններում հաշվառված մեծահասակների և երեխաների թիվը, ովքեր հաշվետու տարվա վերջի դրությամբ ողջ են:</p> <p><b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (մինչև 15 տարեկան և 15-ից բարձր):</p>	Տարին մեկ անգամ/ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բուժման գրանցամատյան	ՁԻԱՀ-ի ԿՀԿ	85%
<b>Ռազմավարություն 1.</b> ՄԻԱՎ վարակով հիվանդներին ՀՌՎ բուժման հասանելիության ապահովում	ՄԻԱՎ վարակի խորացած իմունային անբավարարության փուլում գտնվող մեծահասակների և երեխաների տոկոսը, ովքեր ստանում են ՀՌՎ բուժում հաշվետու տարվա վերջի դրությամբ	<p><b>Համարիչ.</b> ՄԻԱՎ վարակի խորացած իմունային փուլում գտնվող մեծահասակների և երեխաների թիվը, ովքեր ստանում են ՀՌՎ բուժում հաշվետու տարվա վերջի դրությամբ:</p> <p><b>Հայտարար.</b> ՄԻԱՎ վարակի խորացած իմունային անբավարարության փուլում գտնվող մեծահասակների և երեխաների թիվը:</p>	Տարին մեկ անգամ/ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բուժման գրանցամատյաններ և Սպեկտրում համակարգչային ծրագիր	ՁԻԱՀ-ի ԿՀԿ	1110



		<b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (մինչև 15 տարեկան և 15-ից բարձր):			
ՄԻԱՎ վարակով հիվանդ մեծահասակների և երեխաների տոկոսը, ովքեր շարունակում են ստանալ ՀՌՎ բուժում այն սկսելուց 12 ամիս անց	<b>Համարիչ.</b> ՄԻԱՎ վարակով հիվանդ մեծահասակների և երեխաների թիվը, ովքեր շարունակում են ստանալ ՀՌՎ բուժում այն սկսելուց 12 ամիս անց: <b>Հայտարար.</b> ՄԻԱՎ վարակով հիվանդ մեծահասակների և երեխաների ընդհանուր թիվը, ովքեր սկսել են ստանալ ՀՌՎ բուժում հաշվետու ժամանակահատվածին նախորդող 12 ամիսների ընթացքում, ներառյալ ՀՌՎ բուժումն սկսելուց հետո մահացածները, բուժումն ընդհատածները և նրանք, որոնց հետ կապն ընդհատվել է ՀՌՎ բուժումն սկսելուց 12 ամիս անց: <b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (մինչև 15 տարեկան և 15-ից բարձր):	Տարին մեկ անգամ /ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բուժման գրանցամատյաններ	ՁԻԱՀ-ի ԿՀԿ	85%	
ՀՌՎ բուժում ստացող ՄԻԱՎ վարակով հիվանդների տոկոսը, ովքեր	<b>Համարիչ.</b> ՄԻԱՎ վարակով հիվանդներ, ովքեր ստանում են ՀՌՎ բուժում և ունեն վիրուսային ծանրաբեռնվածության	Տարին մեկ անգամ/ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բուժման գրանցա-	ՁԻԱՀ-ի ԿՀԿ	90%	

	<p>ունեն վիրուսային ծանրաբեռնվածության չհայտնաբերվող մակարդակ</p>	<p>չհայտնաբերվող մակարդակ:  <b>Հայտարար.</b> ՄԻԱՎ վարակով հիվանդներ, ովքեր ստանում են ՀՌՎ բուժում:  <b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի, տարիքի (մինչև 15 տարեկան և 15-ից բարձր) և բուժման սխեմայի:</p>	<p>մատյաններ</p>		
	<p>ՄԻԱՎ վարակով հիվանդների տոկոսը, ովքեր ախտորոշման պահին ունեն ՀՌՎ բուժման կարիք</p>	<p><b>Համարիչ.</b> ՄԻԱՎ վարակով հիվանդների թիվը, ովքեր ախտորոշման պահին ունեն ՀՌՎ բուժման կարիք:  <b>Հայտարար.</b> ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի թիվը:  <b>Վերլուծություն.</b> Բաշխումը տրվում է ըստ սեռի և տարիքի (մինչև 15 տարեկան և 15-ից բարձր):</p>	<p>Տարին մեկ անգամ/  ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բուժման գրանցամատյաններ</p>	<p>ՁԻԱՀ-ի ԿՀԿ</p>	<p>&gt;35%</p>
	<p>ՄԻԱՎ վարակի խորացած իմունային անբավարարության փուլում գտնվող մեծահասակների և երեխաների տոկոսը, ովքեր ստանում են ՀՌՎ բուժում և</p>	<p><b>Համարիչ.</b> Հաշվետու տարվա ընթացքում ՀՌՎ բուժում ստացող ՄԻԱՎ վարակի խորացած իմունային անբավարարության փուլում գտնվող հիվանդների թիվը, ովքեր սկսել են բուժում ստանալ նաև տուբերկուլոզի դեմ:  <b>Հայտարար.</b> ՄԻԱՎ վարակով հիվանդների շրջանում</p>	<p>Տարին մեկ անգամ/  ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բուժման գրանցամատյաններ</p>	<p>ՁԻԱՀ-ի ԿՀԿ</p>	<p>Կհստակեցվի</p>

	միաժամանակ սկսել են ստանալ հակատուբերկուլոզային բուժում հաշվետու տարվա ընթացքում	տուբերկուլոզի դեպքերի հաշվարկային թիվը: <b>Վերլուծություն.</b> Ըստ սեռի և տարիքի (մինչև 15 տարեկան և 15-ից բարձր):			
<b>Ռազմավարություն 1.</b> Ֆինանսավորման արդյունավետության բարձրացում	ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ազգային ծախսերի նկարագրություն ըստ բաժինների և ֆինանսավորման աղբյուրների	Ազգային ֆինանսավորման մոդել <b>Վերլուծություն.</b> Տեղային և միջազգային ֆինանսավորում ըստ բաժինների և ֆինանսական աղբյուրների:	Երկու տարին մեկ անգամ/ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ազգային ծախսերի գնահատում	ՁԻԱՀ-ի ԿՀԿ	Կհստակեցվի

## **II. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ**

14. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մոնիտորինգի և գնահատման համար մշակվել են մի շարք միջազգային չափորոշիչներ և ուղեցույցներ՝ «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ազգային ծրագիր. մոնիտորինգի և գնահատման ուղեցույց» (ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագիր, 2000թ.), «Հիմնական ցուցանիշների կառուցման ուղեցույց. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ոլորտում պարտավորությունների հռչակագրի մոնիտորինգ» (ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագիր 2012թ.), «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ազգային խորհուրդներ. մոնիտորինգի և գնահատման գործնական աշխատանքի ձեռնարկ» (ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագիր/Համաշխարհային բանկ, 2002թ.), «Մոնիտորինգի և գնահատման ֆունկցիոնալ համակարգի 12 բաղադրիչների համար կազմակերպչական շրջանակ» (ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագիր, 2007թ.):
15. Մոնիտորինգի և գնահատման համակարգի հզորացումը պետք է դիտարկվի որպես առաջնահերթություն՝ հանրային առողջապահության մոտեցումների շրջանակներում դրա ֆունկցիոնալությունը բարձրացնելու և այն առավել ծախսարդյունավետ դարձնելու համար:
16. Հանրային առողջապահության մոտեցումները ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մոնիտորինգին և գնահատմանը նկարագրված են ստորև ներկայացված սխեմայում:

Արդյո՞ք բավարար են միջամտությունների ծավալն ու շրջանակը

Արդյունավետության որոշում  
ԵԼՔԻ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

8. Արդյո՞ք համատեղ ջանքերը բավարար են եղել համաճարակի վրա ազդելու համար (ծածկույթ, ազդեցություն):  
Կենսաբանական և վարքագծային հետազոտություններ

Արդյո՞ք ճիշտ ենք անում

Ազգային ծրագրերի մոնիտորինգ և գնահատում

ԵԼՔ

7. Արդյո՞ք միջամտությունները փոփոխություն են առաջացրել:  
Ելքի գնահատման հետազոտություններ

ԱՐԴՅՈՒՆՔ

6. Արդյո՞ք ծրագիրն իրականացվում է այնպես, ինչպես պլանավորվել էր:  
Արդյունքի մոնիտորինգ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

5. Ի՞նչ ենք անում, ա՞րդյոք ճիշտ ենք անում:  
Գործընթացի մոնիտորինգ և գնահատում, որակի գնահատում

Արդյո՞ք ճիշտ միջամտություններ են արվում

Հնարավոր հակազդման ճշգրտում

ՆԵՐԴՐՈՒՄ

4. Ի՞նչ միջամտություններ և ռեսուրսներ են անհրաժեշտ:  
Կարիքներ, ռեսուրսներ, հակազդման վերլուծություն և ներդրման մոնիտորինգ

3. Ինչպիսի՞ միջամտություններ կարող են իրականացվել (արդյունավետություն): Արդյո՞ք ճիշտ միջամտություններ են արվում:

Հատուկ, գործնական և ֆորմատիվ հետազոտություններ

2. Որո՞նք են նպաստող գործոնները:


Ուսումնասիրություններ

Խնդրի սահմանում

1. Որ՞ն է խնդիրը:  
Իրավիճակային վերլուծություն և համաճարակաբանական հետազոտություններ

17. Մոնիտորինգի և գնահատման համակարգի մակարդակները նկարագրված են ստորև ներկայացված սխեմայում:

**ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման գործընթացում տվյալների հավաքագրման, տեղեկատվության, հաշվետվությունների և զեկույցների տրամադրման հոսքերի սխեմատիկ նկարագրություն**



18. Մոնիտորինգի և գնահատման գործընթացում ներգրավված կազմակերպությունների կողմից տրամադրվող տվյալներն ու պարբերականությունը նկարագրված են ստորև ներկայացված աղյուսակում:

<b>Կազմակերպություն</b>	<b>Ներկայացվող տվյալներ</b>	<b>Տվյալների ներկայացման պարբերականություն</b>
ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն	Ազրեգացված և վալիդացված տվյալներ՝ ըստ ծրագրային ոլորտների	Եռամսյակային
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ազրեգացված և վալիդացված տվյալներ ուսումնական հաստատություններից	Տարեկան
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	Ազրեգացված և վալիդացված տվյալներ երիտասարդների շրջանում իրականացված միջոցառումների վերաբերյալ	Տարեկան
Բուժհաստատություններ	Հաշվետվություններ ԽՀ վերաբերյալ	Եռամսյակային
ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ կատարող լաբորատորիաներ	Հաշվետվություններ հետազոտությունների վերաբերյալ	Ամսական
Գլոբալ հիմնադրամի ծրագրերի պետական ոլորտի հիմնական ստացող	Ազրեգացված և վալիդացված տվյալներ իրականացված միջոցառումների վերաբերյալ	Եռամսյակային
ՀԿ-ներ և Գլոբալ հիմնադրամի ծրագրերի հասարակական ոլորտի հիմնական ստացող	Ազրեգացված և վալիդացված տվյալներ իրականացված կանխարգելման ծրագրերի վերաբերյալ	Եռամսյակային
ՀՀ արդարադատության նախարարության ՔԿՀ-ների վարչություն	Ազրեգացված և վալիդացված տվյալներ իրականացված միջոցառումների վերաբերյալ	Տարեկան
Հանրապետական նարկոլոգիական դիսպանսեր	Ազրեգացված և վալիդացված տվյալներ իրականացված միջոցառումների վերաբերյալ	Տարեկան
Արյունաբանության հանրապետական կենտրոն	Ազրեգացված և վալիդացված տվյալներ դոնորական արյան վերաբերյալ	Տարեկան

Պետական այլ կազմակերպություններ	Ագրեգացված և վալիդացված տվյալներ իրականացված միջոցառումների վերաբերյալ	Տարեկան
ՄԱԿ-ի գործակալություններ	Ագրեգացված և վալիդացված տվյալներ իրականացված միջոցառումների վերաբերյալ	Տարեկան
Միջազգային կերպություններ	Ագրեգացված և վալիդացված տվյալներ իրականացված միջոցառումների վերաբերյալ	Տարեկան
Մասնավոր ոլորտի կազմակերպություններ	Ագրեգացված և վալիդացված տվյալներ իրականացված միջոցառումների վերաբերյալ	Տարեկան
Դոնոր կազմակերպություններ	Տեղեկատվություն՝ ըստ աջակցման տեսակների և իրականացնողների	Տարեկան

19. Մոնիտորինգի և գնահատման պլանը մշակվել է համաձայն հետևյալ ղեկավարող սկզբունքների՝

- 1) Ներառում. մոնիտորինգը և գնահատումը պետք է ներառվեն երկրում իրականացվող ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բոլոր ծրագրերում,
- 2) Ինտեգրում. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրի մոնիտորինգի ցուցանիշները պետք է ինտեգրվեն մոնիտորինգի և գնահատման ազգային տվյալների բազայում,
- 3) Պարզություն. տվյալների հավաքագրումը, վերլուծությունն ու ներկայացումը պետք է լինեն հնարավորինս պարզ,
- 4) Գործողությունների ուղղորդում. հավաքագրված տվյալները պետք է օգտագործվեն ծրագրային և տեխնիկական որոշումների կայացման համար: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միջամտությունների բոլոր մակարդակներում պետք է ուղիղ կապ լինի տվյալների հավաքագրման, վերլուծության, հաշվետվությունների ներկայացման և որոշումների կայացման մեջ,
- 5) Թափանցիկություն. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին ազգային հակազդման մոնիտորինգն ու գնահատումը պետք է լինեն բաց և մասնակցային՝ շահագրգիռ կողմերի և բոլոր մակարդակների մասնակիցների համար: Մոնիտորինգի և գնահատման համակարգը պետք է լինի հասկանալի, հասանելի և համապատասխանի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման գործում ներառված շահագրգիռ կողմերի կարիքներին:



20. Ազգային ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ տվյալների աղբյուրներն են՝

- 1) Հետազոտությունների միջոցով ստացվող ցուցանիշների (ելքի և ազդեցության ցուցանիշներ) աղբյուրներ,
- 2) Ծրագրային մոնիտորինգի միջոցով ստացվող ցուցանիշների (արդյունքի ցուցանիշներ) աղբյուրներ:

21. Տվյալների աղբյուրներն ըստ ծրագրային ոլորտների հետևյալն են՝

- 1) ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն.
  - ա. Վարչական վիճակագրություն,
  - բ. ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների հաշվետվություն,
  - գ. Դոնորական արյան նմուշների վերաբերյալ հաշվետվություն,
  - դ. ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի վերաբերյալ հաշվետվություն,
  - ե. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն և խորհրդատվություն տրամադրող հաստատությունների հաշվետվություն,
  - զ. Իրականացված հետազոտությունների տվյալներ:
- 2) Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում.
  - ա. Վարչական վիճակագրություն,
  - բ. ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների հաշվետվություն,
  - գ. ՀՌՎ բուժման գրանցամատյաններ:
- 3) Հակառետրովիրուսային բուժում.
  - ա. ՀՌՎ բուժման գրանցամատյաններ,
  - բ. Իրականացված հետազոտությունների տվյալներ:
- 4) Ընդհանուր բնակչության վարքագիծ.
  - ա. Վարքագծային հետազոտություններ,
  - բ. Ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն:
- 5) Բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբեր.
  - ա. Վարչական վիճակագրություն,
  - բ. Ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հաշվետվություններ,
  - գ. Կենսաբանական և վարքագծային հետազոտություններ,
  - դ. Իրականացված հետազոտությունների տվյալներ:

22. Ընթացիկ վիճակագրության տվյալները հավաքագրում է ՀՀ առողջապահության նախարարության ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն: Հավաքագրվում է տեղեկատվություն հանրապետությունում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ անցկացնող բոլոր լաբորատորիաներից: ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ին տրամադրվում են ամսական և տարեկան վիճակագրական հաշվետվություններ: ՄԻԱՎ-ի վերաբերյալ անցկացված հետազոտությունների արդյունքների մասին ստացված հաշվետվությունները տեղեկատվություն են պարունակում հետազոտված համակազմի վերաբերյալ (այդ թվում՝ հղի կանայք,

ՄԻԱՎ-ով վարակված մայրերից ծնված նորածիններ, ԹՆՕ-ներ, SUS-ներ, դոնորներ և այլք): Տեղեկատվությունը ներկայացվում է ըստ սեռի, տարիքի, բնակության վայրի (մայրաքաղաք, այլ քաղաքներ և գյուղական վայրեր), հետազոտվածների և անցկացված հետազոտությունների թվի: ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում հավաքագրված տվյալները եռամսյակային (աճողական) ու տարեկան հաշվետվությունների ձևով ներկայացվում են առողջապահական տեղեկատվական վերլուծական հանրապետական կենտրոն և ազգային վիճակագրական ծառայություն, ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ հակահամաճարակային տեսչություն: ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն տեղեկատվություն ունի ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն տրամադրող հաստատությունների քանակի, աշխարհագրական տեղակայման, դրանց բաշխման վերաբերյալ, տրամադրում է մեթոդական օգնություն և տեխնիկական աջակցություն: Նշված ծառայություններ տրամադրող հաստատությունները ՁԻԱՀ-ի ԿՀԿ են ներկայացնում եռամսյակային հաշվետվություններ:

23. ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի լաբորատորիան երկրում միակ ռեֆերենսային լաբորատորիան է, որն իրականացնում է ՄԻԱՎ վարակի վերջնական լաբորատոր ախտորոշում և հակառետրովիրուսային բուժման մոնիտորինգի համար անհրաժեշտ լաբորատոր հետազոտություններ:
24. Համաճարակային իրավիճակի և հակառետրովիրուսային բուժման մոնիտորինգի վերաբերյալ տվյալները հավաքագրվում են ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի համաճարակաբանական հսկման և բժշկական օգնության ու սպասարկման բաժիններում, որոնք հաշվետվություն են ներկայացնում ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի մոնիտորինգի և գնահատման ազգային խմբին:
25. Ընթացիկ համաճարակաբանական հետազոտությունը տրամադրում է բազմակողմանի տեղեկատվություն ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի վերաբերյալ:
26. ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի կողմից ՄԻԱՎ վարակի և ՁԻԱՀ-ի նոր գրանցված դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր ամիս տրամադրվում է ՀՀ առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնին: ՄԻԱՎ/տուբերկուլոզ, ՄԻԱՎ/հեպատիտ B, ՄԻԱՎ/հեպատիտ C զուգորդված դեպքերի վերաբերյալ եռամսյակային հաշվետվություն է ներկայացվում ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ հակահամաճարակային տեսչություն: ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի մոնիտորինգի և գնահատման ազգային խումբը յուրաքանչյուր ամիս թարմացնում է ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակի վերաբերյալ տվյալները և տեղադրում ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի ինտերնետային կայքում՝ [www.armdaids.am](http://www.armdaids.am):

27. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ոլորտում ծրագրեր իրականացնող կազմակերպությունների կողմից մոնիտորինգին և գնահատմանն առնչվող ընթացիկ հաշվետվությունները կազմվում են համաձայն ստորև ներկայացված ուղեցույցի:

Տվյալների տեսակ	Տրամադրվող ծրագրային տվյալներ	Տվյալների աղբյուր	Տվյալների տրամադրման պարբերականություն	Հաշվետվությունը ստացող կազմակերպություն
Ընդհանուր ծրագրային տեղեկություններ	Իրականացման վայր Տևողություն Ընդհանուր բյուջե Ծրագրի նպատակներ Շահառուները/բնակչության նպատակային խումբ	Ծրագրային առաջարկ	Ծրագրի սկզբում	ՁԻԱՀ-ի ԿՀԿ
Ներդրումներ	Վարձատրվող աշխատակիցների թիվ Նյութատեխնիկական միջոցներ Ներուժի զարգացում	Ծրագրային հաշվետվություններ	Տարեկան	ՁԻԱՀ-ի ԿՀԿ
Գործողություններ	Տրամադրվող ծառայությունների արդյունավետություն/որակ Ներդրման խնդիրներ	Ծրագրային հաշվետվություններ	Տարեկան	ՁԻԱՀ-ի ԿՀԿ
Միջոցառումներ	Տրամադրված ծառայությունների տեսակ և քանակ Ծրագրերում ընդգրկված շահառուների թիվ Ներուժի զարգացում	Ծրագրային հաշվետվություններ	Տարեկան	ՁԻԱՀ-ի ԿՀԿ

28. Գլոբալ հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհի շրջանակներում ծրագրերի մոնիտորինգն իրականացվում է այդ դրամաշնորհի Հիմնական ստացողների կողմից: Ծրագրեր իրականացնողները եռամսյակային և տարեկան հաշվետվություններ են ներկայացնում Հիմնական ստացողին, որն ընդհանրացնում է դրանք, կազմում ընդհանուր հաշվետվություն և ներկայացնում ՄՀՀ-ին ու Գլոբալ հիմնադրամին:

29. Ծրագրերի մոնիտորինգի և գնահատման, դրանց վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման համար պատասխանատու են ծրագրեր իրականացնող կազմակերպությունները: Տվյալների որակը՝ ամբողջականություն, ժամանակին ներկայացում,

բազմակողմանիություն և ճշգրտություն, ստուգվում է Հիմնական ստացողի մոնիտորինգի և գնահատման մասնագետների դաշտային այցելությունների ժամանակ:

30. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների վերաբերյալ ծրագրային տվյալները հավաքագրվելու են ազգային ծրագրի տվյալների հավաքագրման մեխանիզմներին համապատասխան: Գլոբալ հիմնադրամի կողմից ֆինանսավորվող ծրագրերի մոնիտորինգն իրականացվելու է ԳՀ-ի մոնիտորինգի և գնահատման ուղեցույցների համաձայն: Գլոբալ հիմնադրամին հաշվետվություններ ներկայացնելու մեխանիզմը ներդրված է ազգային մոնիտորինգի և գնահատման համակարգի հաշվետվական մեխանիզմում:
31. Այլ աղբյուրներից աջակցվող ծրագրեր իրականացնող կազմակերպությունները ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ին պահանջվող տվյալները կներկայացնեն պարբերաբար, ըստ սահմանված ժամանակացույցի:
32. Ստացված տվյալները կմուտքագրվեն և կմշակվեն ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի մոնիտորինգի և գնահատման ազգային խմբի կողմից համապատասխան համակարգչային ծրագրերով:
33. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հետազոտությունները ներառում են՝
  - 1) ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտություններ.
    - ա. ՄԻԱՎ-ի տարածվածության իրական մակարդակը բացահայտելու, համաճարակի զարգացման միտումները պարզելու համար պարբերաբար իրականացվում են կենսաբանական և վարքագծային հետազոտություններ:
    - բ. Երկրորդ սերնդի համաճարակաբանական հետազոտությունների համակարգը հնարավորություն է տալիս ստանալու ՄԻԱՎ-ի տարածումը նվազեցնելու, համաճարակի զարգացման միտումները բացահայտելու և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց բուժումն ու խնամքը պլանավորելու համար անհրաժեշտ տեղեկատվություն:
    - գ. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական հետազոտությունների նպատակն է գնահատել բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունը:
    - դ. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ վարքագծային հետազոտություններն անցկացվում են ՄԻԱՎ-ի տարածմանը նպաստող վարքագծային գործոնները բացահայտելու, ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը գնահատելու համար:

- ե. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունները նաև հնարավորություն են տալիս գնահատելու իրականացված կանխարգելիչ միջոցառումների արդյունավետությունը, մշակելու և ներդնելու արդյունավետ կանխարգելիչ ծրագրեր:
- զ. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտություններն անցկացվում են երկու տարին մեկ: ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտություններն իրականացվում են՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված ազգային ուղեցույցի և գործնական աշխատանքի ձեռնարկի, որոնցում սահմանված են ընտրանքային խմբերի և տեղամասերի ընտրության չափանիշները, ընտրանքի չափերը, լաբորատոր հետազոտությունների համար արյան նմուշների հավաքագրման մեթոդները, փորձանմուշների տեղափոխման և պահպանման կարգը, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների մեթոդները, հետազոտությունների արդյունքների մշակման և վերլուծման մեթոդները:
- է. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հետազոտությունների շրջանակներում իրականացված միջոցառումների մեթոդական ղեկավարումն ու վերահսկումը կատարվում է ՀՀ ԱՆ ՁԻԱԿ-ի ԿԿԿ-ի կողմից:
- 2) Համաճարակային իրավիճակի գնահատումներ.
- ա. ՀՀ-ում իրականացվել են ՄԻԱՎ վարակի համաճարակի մի շարք գնահատումներ՝ համաշխարհային լավագույն փորձի հիման վրա, միջազգայնորեն երաշխավորված գործիքների և մեթոդների կիրառմամբ: Մասնավորապես իրականացվել է բնակչության առավել վտանգի ենթարկվող հիմնական խմբերի չափերի գնահատում, հիվանդացության և տարածվածության գնահատումներ (Սպեկտրում), փոխանցման ուղիների վերաբերյալ գնահատումներ: Նմանատիպ գնահատումներ պլանավորվում է կատարել պարբերաբար: Դրանք իրականացվելու են ՀՀ ԱՆ ՁԻԱԿ-ի ԿԿԿ-ի կողմից:
34. Ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտությունը մեթոդ է ազգային մակարդակով բնակչության գիտելիքի և վարքագծի փոփոխություններին հետևելու համար: Այսպիսի հետազոտություններ ՀՀ-ում իրականացվել են 2000, 2005 և 2010թթ.:
35. Գործնական հետազոտություններն իրականացվում են տրամադրվող ծառայությունների մատչելիությունը, հասանելիությունը, որակը և/կամ կայունությունը գնահատելու և դրանք բարելավելու նպատակով:

36. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ համաճարակաբանական հետազոտությունները պետք է լրացվեն ՍՃՓՎ-ների, վիրուսային հեպատիտ B-ի, վիրուսային հեպատիտ C-ի, բնակչության վերարտադրողական առողջության, համաճարակի վրա սոցիալական գործոնների ազդեցության հետազոտություններով: Ստորև ներկայացվում է հատուկ և գիտական հետազոտություններ իրականացնող կազմակերպությունների կողմից տվյալների հավաքագրման և տրամադրման ուղեցույցը:

<b>Տրամադրվող տեղեկություններ</b>	<b>Տվյալների տրամադրման ժամանակ</b>	<b>Հաշվետվությունը ստացող կազմակերպություն</b>
Հետազոտության հիմնական նպատակը	Հետազոտության սկզբում	ՁԻԱՀ-ի ԿՀԿ
Իրականացման վայրը	Հետազոտության սկզբում	ՁԻԱՀ-ի ԿՀԿ
Բնակչության հետազոտվող խումբը	Հետազոտության սկզբում	ՁԻԱՀ-ի ԿՀԿ
Հետազոտության ուղեցույցը (մեթոդը, ընտրանքի չափը և այլն)	Հետազոտության սկզբում	ՁԻԱՀ-ի ԿՀԿ
Հիմնական արդյունքները	Հետազոտության ավարտին	ՁԻԱՀ-ի ԿՀԿ
Հիմնական եզրակացությունները և առաջարկությունները	Հետազոտության ավարտին	ՁԻԱՀ-ի ԿՀԿ
Հետազոտության վերաբերյալ վերջնական հաշվետվությունը	Հետազոտության ավարտին	ՁԻԱՀ-ի ԿՀԿ

37. Ներկայումս ֆինանսական մոնիտորինգի տվյալների հավաքագրման հիմնական աղբյուրը դոնոր կազմակերպություններն են: Ֆինանսական մոնիտորինգի նպատակով նախատեսվում է ներդնել ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի առաջարկած ՆԱՍԱ (ՁԻԱՀ-ի ազգային ծախսերի գնահատում) գործիքը: Այդ նպատակով կստեղծվի աշխատանքային խումբ, կմշակվեն համապատասխան ուղեցույցներ:

38. Տվյալների ազգային բազան ինտեգրում է արդեն իսկ գոյություն ունեցող հաշվետվական համակարգերից ստացված տվյալներ, ինչը հնարավորություն է տալիս խուսափելու կրկնարկումներից, ապահովելու տվյալների թափանցիկությունն ու հավաստիությունը, ինչպես նաև գաղտնիությունը: Տվյալների բազան ներառելու է մոնիտորինգի և գնահատման ազգային բոլոր ցուցանիշները և կառավարվելու է ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի կողմից:

39. Տվյալների որակի ապահովման գործուն համակարգի համար վճռորոշ նշանակություն ունեն ստորև աղյուսակում ներկայացված ֆունկցիոնալ տարրերն ու բաղադրիչները:

1. Ֆունկցիոնալ տարրեր		2. Բաղադրիչներ	
I	Մոնիտորինգի և գնահատման համակարգում դերեր ու պարտականություններ	1	Մոնիտորինգի և գնահատման մեջ ներգրավված անձնակազմ հստակ սահմանված պարտականություններով
II	Վարժանքներ	2	Համապատասխան վարժանքներ անցած անձնակազմ
III	Տվյալների տրամադրման կարգ	3	Տվյալների տրամադրման հստակ սահմանված (գրավոր) մեխանիզմ. ի՞նչ, ինչպե՞ս, ե՞րբ և ու՞մ ներկայացնել
IV	Ցուցանիշների սահմանումներ	4	Չափորոշիչներին համապատասխան սահմանված ցուցանիշներ
		5	Տվյալների հավաքագրման և ներկայացման ստանդարտ ձևեր
		6	Սահմանված ձևով պահպանվող և հասանելի տվյալների աղբյուրներ
VI	Տվյալների կառավարման գործընթացներ	7	Տվյալների հավաքագրման և դրա հետ կապված հետագա քայլերի հստակ կարգ
		8	Տվյալների որակին վերաբերող ճշգրտված խնդիրներ և դրանց շտկմանն ուղղված մեխանիզմներ
		9	Հաշվետվություններում առկա անճշտությունները բացահայտելուն և դրանք շտկելուն ուղղված հստակ սահմանված գործընթացներ
		10	Տվյալների աղբյուրների պարբերական ստուգման սահմանված գործընթացներ
VIII	Մոնիտորինգի և գնահատման ազգային համակարգի տվյալների բազայի հետ կապ	11	Ծրագրերի շրջանակներում տվյալների հավաքագրման ու հաշվետվությունների ներկայացման համակարգի կապվածություն մոնիտորինգի և գնահատման ազգային համակարգի տվյալների բազայի հետ

